

**ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՍՏԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

25.01.2018թ

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ Արսեն Ղուկասյանի, ավագանու անդամների և համայնքի բնակիչների

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Իրավական ակտերի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքով, համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում հետևյալ գործունեությունը. ըստ բնագավառների

1.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, սահմանված կարգով. քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել է համապատասխան միջոցառումները.
- Քաղաքացիներին տրվել է տարբեր բնույթի 925 տեղեկանքներ.

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով կազմակերպվում և հավաքագրվում է հողի հարկը՝ գույքահարկը, տեղական տուրքը, այլ ոչ հարկային եկամուտները՝ հողի վարձակալության գումարները:

3. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՄՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Իրականացվել է եռեհարկ 7 և Հինգ հարկեր 1 շենքերի մուտքերի բարեկազումն ու դռների տեղադրումը:
- Իրականացվել է համայնքի փողոցային լուսավորության անցկացման աշատանքները:
- Իրականացվել է Համայնքի թվով 7 բազմաբնակարան շենքերի գազաֆիկացման աշատանքները,
- Կառուցվել է նոր խմելաջրի ցանց համայնքի հինգ հարկեր 1 շենքի համար
- Հիմնովին ասֆալտապատվել է համայնքի Տերյան փողոցը,
- Փոխվել է համայնքի երկու փողոցների խմելաջրի ցանցերը, նոր պլաստմասե խողովակներով ընդհանուր՝ 2000մետր,
- Իրականացվում է համայնքի աղբահանությունը.

4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Միջոցներ է ձեռնարկվել գոհված ազատամարտիկների ընտանիքների և պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:

5. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը:

6. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում:
- Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն:
- Տրվել է համայնքի տարածքում տեխնիկական հեղուկների և հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

7. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության մանկապարտեզների, մշակույթի տան, գրադարանի գործունեությունը:
- Համայնքում գործում է երկու միջնակարգ դպրոց:
- Համայնքում գործում է հոգևոր դպրոց, որտեղ դասերից դուրս ուսուցանում են հոգևոր դաստիարակություն, գործում է տարբեր խմբակներ:
- Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ :
- **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒԱՅԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**
- Կազմակերպվել է համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների գործունեությունը:

8. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Համայնքի տարածքում կազմակերպվել է սոցիալական օգնության ծառայության գործունեությունը:
- Իրականացվել է սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագիրը:

9. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության , հակահամաճարակային միջոցառումները:
- Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար:
- Համայնքի տարածքում շահագործվում է Յհակակարկտային կայան:

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Խմելաջրի բացակայություն.
- Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում.
- Նոր աշխատատեղերի ստեղծում,
- Հակակարկտային կայանների տեղադրում,
- Ներտնտեսային ռոռզման համակարգի վերանորոգում:

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

2018թվական հունվարի 25
գ. Քարակերտ